



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) գործող պետական և մասնավոր կազմակերպություններում աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանվածության ներկայիս վիճակը տեղիք է տալիս լուրջ մտահոգությունների՝ կապված ՀՀ-ի կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման, ինչպես նաև ներպետական օրենսդրության թերի կարգավորումների հետ:

Հայաստանը վավերացրել է ԱՄԿ-ի թվով 29 կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան, որով ձեռք է բերել պարտավորություններ՝ աշխատանքային հարաբերությունների ոլորտում ստեղծելու հիմնարար իրավունքներ ու սկզբունքներ, ձեռնարկելու բավարար միջոցներ աշխատանքային իրավունքների արդյունավետ իրացման համար, ստեղծելու վերահսկողական համակարգ աշխատանքային իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար:

2019 թվականի մայիսի 14-ին ՀՀ Կառավարության և Աշխատանքի միջազգային կազմակերպության միջև ստորագրվել է «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագիրը, որով նախատեսվում է իրականացրել ՀՀ աշխատանքային օրենսգրքի ամբողջական բարեփոխումներ: Այս բարեփոխումների համատեքստում աշխատանքային օրենսդրության պահանջների կիրարկման մեխանիզմների ստեղծումը, աշխատանքի տեսչության վերականգնումը շարունակում է մնալ հիմնական մարտահրավեր, ինչով և պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել գնահատել գործող տեսչական մարմնի գործունեության արդյունավետությունը:

Հայաստանը Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի վավերացմամբ պարտավորվել է իրականացնել և պարբերաբար վերանայել աշխատանքային անվտանգությանը, աշխատանքային առողջությանը և աշխատանքային միջավայրին վերաբերող ազգային քաղաքականությունը: Նշված ուղղություններով ազգային քաղաքականության ձևավորման գործընթացում անմասն չպետք է մնա նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (այսուհետ նաև՝ Տեսչական մարմին), որը ստեղծվել է այս ոլորտում պետության պարտավորությունների իրականացումն ապահովելու համար: Պետության որդեգրած քաղաքականության իրականացումն ապահովող գործնական երաշխիքներից է Տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների արդյունքում ուսումնասիրությունների կատարումը, հիմնական խնդիրների վերհանումը, որը, սակայն, մնում է անկատար:

Տեսչական բարեփոխումների արդյունքում 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 444-Ն որոշմամբ ձևավորվեց ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը: Այնուհետև՝ 2018 թվականի մարտի 23-ին, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքը, որով ՀՀ Կառավարությանը ենթակա մարմինների շարքում ընդգրկվեց Տեսչական մարմինը, որի կանոնադրությունը հաստատվեց Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշմամբ, համաձայն որի՝ Տեսչական մարմնին, ի թիվս այլնի, վերապահվեց:



- աշխատատեղում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների պահպանման և շահագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը,
- աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների պատճառների ուսումնասիրումն ու վերլուծումը,
- աշխատանքային օրենսդրության և այլ իրավական ակտերի կիրարկման ուղղությամբ գործատուների և արհեստակցական միությունների համար աշխատանքի անվտանգության ապահովման գործում մեթոդական օգնության կազմակերպումը՝ համապատասխան տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը,
- մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Գործող Տեսչական մարմնի լիազորությունները սահմանափակվում են բացառապես աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պարտադիր պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացմամբ, չնայած այն հանգամանքին, որ ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատանքի տեսչության համակարգի գործառույթները անհամեմատ ավելի լայն են և ընդգրկում են նաև աշխատաժամանակի, հանգստի, վարձատրության պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողությունը ևս: Այսպես՝ ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Աշխատանքի տեսչության համակարգի գործառույթները պետք է լինեն.

- ա) ապահովել աշխատանքի ընթացքում աշխատողների աշխատանքի պայմանների և պաշտպանության հետ կապված իրավական դրույթների կատարումը, ինչպիսիք են աշխատանքային օրվա տևողության, աշխատավարձի, անվտանգության, առողջապահության և բարեկեցության դրույթները, երեխաների և երիտասարդների աշխատանքին առնչվող դրույթները և նմանատիպ այլ հարցերը՝ այնքանով, որքանով դրանց կատարումն ապահովելու համար լիազորված են աշխատանքի տեսուչները,
- բ) այդ դրույթների պահպանման առավել արդյունավետ միջոցների մասին գործատուներին և աշխատողներին տեխնիկական տեղեկատվություն և խորհուրդներ տրամադրելը,
- գ) գործող իրավական դրույթներով հատուկ չկարգավորված թերությունների և չարաշահումների մասին իրավասու մարմնին տեղեկացնելը:

Վերոգրյալից ակնհայտ է, որ ՀՀ-ում գործող Տեսչական մարմինն ունի գործառութային սահմանափակում, ինչը հետընթաց է աշխատողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում:

Հարկ է նշել, որ Տեսչական մարմինը ԱՄԿ թիվ 81 Կոնվենցիայից բխող՝ ըստ էության վերահսկողության լիազորություն ունի միայն մի դեպքում, որը սահմանված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 33.1 հոդվածում, համաձայն որի՝ «Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և

արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացման ժամանակահատվածում ստացված գրավոր դիմումի առկայության դեպքում ոլորտի լիազորված տեսչական մարմինն իրականացնում է գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ»:

Թեև նշված հոդվածի համաձայն գրավոր դիմումի առկայության դեպքում հոդվածով սահմանված խիստ սահմանափակ դեպքերում Տեսչական մարմինն իրավասու է իրականացնելու գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն, այսինքն՝ վերահսկողություն լայն առումով՝ ընդգրկելով աշխատանքային օրենսդրության և աշխատանքային պայմանագրի բոլոր պահանջների և ոչ միայն առողջության և անվտանգության պահպանման նկատմամբ վերահսկողությունը, սակայն Տեսչական մարմինն վերապահված վերահսկողական բոլոր լիազորությունները առկա գործիքակազմի բացակայության պայմաններում ամբողջական ծավալով չեն իրականացվում ներքոնշյալ հիմնավորմամբ:

Տեսչական մարմնի կողմից ստուգումների կազմակերպման և անցկացման ընթացակարգը կարգավորվում է «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, որով նախատեսվել է Տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի միջոցով ստուգումների անցկացման կարգ, որի հիման վրա՝ ՀՀ Կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1124-Ն որոշմամբ սահմանվել է Տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը: Սակայն առ այսօր չեն հաստատվել ստուգումների անցկացումն ապահովող ստուգաթերթերը, որով և Տեսչական մարմինը պետք է իրականացնի օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները:

Վարչապետի աշխատակազմի կողմից մշակվել և 2019 թ. նոյեմբերի 27-ին հանրային քննարկման է դրվել Տեսչական մարմնի կողմից իրականացվող սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բնագավառում ռիսկի վրա հիմնված ստուգումների (Բնագավառ 1) ստուգաթերթերը, դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության բնագավառում (Բնագավառ 2) ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթը, բժշկական սպասարկման բնագավառում ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը (Բնագավառ 3), ինչպես նաև աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթը¹ (Բնագավառ 4) :

Նշենք, որ տնտեսական գործունեության ոչ բոլոր տեսակների ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերն են մշակվել և դրվել հանրային քննարկման: Անհրաժեշտ է փաստել, որ համաձայն ՀՀ Կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1124-Ն որոշման աղյուսակ 2-ի՝ Բնագավառ 1-ի ոլորտային ռիսկայնության ամենամաքարձր միավորը (100 միավոր) ունի «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և

¹ Հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/2148/about>



վերամշակում» տնտեսական գործունեության տեսակը, և ստուգաթերթերի ոչ բոլոր տեսակների մշակման պարագայում առնվազն Որոշմամբ ամենառիսկայինը գնահատված տնտեսական գործունեության նշված տեսակի ստուգաթերթի մշակումը ունի կենսական նշանակություն և պետք է կրի առաջնային բնույթ:

Նշված դիտարկումը բխում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված Տեսչական մարմնի՝ «ըստ ռիսկայնության առաջնորդվելու» սկզբունքից, համաձայն որի՝ Տեսչական մարմինը ռեսուրսները նպատակաուղղում է դեպի այն ոլորտները և տնտեսավարող սուբյեկտները, որոնք առավել ռիսկային են: Ինչ վերաբերում է Բնագավառ 4-ին, ապա թվով 24 տնտեսական գործունեության տեսակներից քննարկման է դրվել միայն «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման» ստուգաթերթը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ստուգաթերթերի բացակայության պայմաններում չի կարող իրականացվել որևէ ստուգում և որպեսզի Տեսչական մարմինը գործի արդյունավետ, անհրաժեշտ է օր առաջ ընդունել ստուգումներն ըստ բնագավառների և գործունեության տեսակների ապահովող ստուգաթերթերը:

ԱՄԿ-ի Կոնվենցիաների և առաջարկությունների կիրառման փորձագետների կոմիտեի՝ 2017 թ.-ին ԱՄԿ-ի 106-րդ նիստում հրապարակված դիտարկումներում նշվում է, որ «աշխատանքային տեսչությունների ընթացիկ բարեփոխումների առնչությամբ Կոմիտեն կցանկանար ընդգծել, որ անկախ նրանից, թե ինչ կազմակերպական տեսակ կամ աշխատանքի կազմակերպման եղանակ ունի աշխատանքային տեսչությունը, կարևոր է, որ աշխատանքի տեսչական համակարգը գործի արդյունավետորեն, և պահպանվեն Կոնվենցիայի սկզբունքները»²:

Այս առումով տեսչական մարմինների հիմնադրման և գործունեության ապահովման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել նշված Կոնվենցիայով սահմանված մի շարք պահանջներ, որոնք վերաբերում են տեսչական մարմնի լիազորությունների շրջանակին, գործունեության երաշխիքներին, աշխատանքի տեսուչների որակավորմանը, տեսչական ծառայության պարտականությունների արդյունավետ իրականացման համար նրանց անհրաժեշտ թվաքանակին, իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածությանը և այլն: Նշվածի կապակցությամբ հարկ է փաստել, որ Տեսչական մարմնի 2020 թ. գործունեության տարեկան ծրագրում նշվում է, որ առկա է Տեսչական մարմնի կադրային հագեցվածության և մարդկային ներուժի զարգացման անհրաժեշտություն: Տեսչական մարմնում նախատեսված է 280 հաստիք, որից համալրված է 208 (առ 15.11.2019թ) հաստիք, կադրային հագեցվածությունը 74,2% է: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ քաղաքացիական ծառայողների հաստիքները 107-ն են (38,2%), իսկ քաղաքացիական պայմանագրով աշխատողների հաստիքները՝ 173-ը (61,8%): Որոշ ստորաբաժանումներում կամ դրանց առանձին բաժիններում կադրային հագեցվածությունը ցածր է 50%-ից:³ Այսպիսով՝ տեսուչների անհրաժեշտ թվաքանակի հետ կապված նույնպես առկա է խնդիր:

Տեսչական մարմնի կանոնադրությամբ Տեսչական մարմնին է վերապահվել նաև աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների

² Observation (CEACR) - adopted 2016, published 106th ILC session (2017)

³ https://www.aatm.am/activity_plan

պատճառների ուսումնասիրումն ու վերլուծումը: Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 260-րդ հոդվածի՝ «Աշխատանքի վայրում դժբախտ դեպքից տուժած, մասնագիտական սուր հիվանդությամբ հիվանդացած աշխատողը (եթե ի վիճակի է), ինչպես նաև այն անձը, որը ականատես է եղել դժբախտ պատահարին կամ դրա հետևանքներին, պարտավոր են անմիջապես այդ մասին հայտնել ստորաբաժանման ղեկավարին, գործատուին, կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության հարցերով ծառայությանը»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Աշխատանքի վայրում աշխատողի մահվան դեպքում գործատուն պարտավոր է անհապաղ հայտնել ապահովագրողին, ՀՀ ոստիկանությանը և աշխատանքի անվտանգության ապահովման նկատմամբ ՀՀ Կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին»:

Հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ գործատուն միայն աշխատողի մահվան դեպքում է պարտավոր հայտնել տեսչական մարմնին, մինչդեռ դժբախտ դեպքի և մասնագիտական հիվանդության մասին հայտնելու պարտավորություն թե «Աշխատանքային օրենսգիրքը», և թե ՀՀ Կառավարության 2006 թվականի մարտի 23-ի թիվ 458-Ն որոշումը չեն սահմանում⁴: Նման կարգավորման պայմաններում բնականաբար Տեսչական մարմինը գրկված է դժբախտ դեպքի և մասնագիտական հիվանդության մասին Տեսչական մարմնին անհապաղ չհայտնելու հիմքով գործատուի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու իրավունքից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության հիշատակված պահանջների կատարման արդյունավետությունը գնահատելու համար դիմել է Տեսչական մարմնի ղեկավարին, որի արդյունքում ստացվել է պատասխան այն մասին, որ 2017-2019 թվականների ընթացքում գործատուների կողմից Տեսչական մարմնին են տրամադրվել աշխատանքի վայրում տեղի ունեցած թվով 27 (քսանյոթ) դժբախտ դեպքի ծառայողական քննության նյութերը, իսկ քաղաքացիների, պետական մարմիններից և այլ կազմակերպություններից ստացված, ինչպես նաև լրատվական կալքերում հրապարակված՝ աշխատանքի վայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի ընթացքում գործատուների կողմից մարմնին են տրամադրվել ևս 31 (երեսունմեկ) ծառայողական քննության նյութեր: Բարձրացված հարցի կապակցությամբ Տեսչական մարմնի ղեկավարը ընդգծել է, որ գործող իրավակարգավորումները դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացումը չեն ապահովում, որպիսի պայմաններում բազմաթիվ դեպքեր շարունակում են մնալ չբացահայտված, իսկ դրանք առաջացնող խնդիրները՝ չլուծված: Իսկ Տեսչական մարմնի կողմից գրանցված խախտումների թիվը տալիս է իրադրության իրական գնահատականն այն մասին, որ ներկայիս օրենսդրական կարգավորումներն այդպես էլ չեն ապահովում և երաշխավորում աշխատողի արժանապատիվ աշխատանքը:

Վերոնշյալի հիման վրա անհրաժեշտ է՝

⁴ Թիվ 458-Ն որոշումը միայն սահմանում է ծառայողական քննության ընթացքում անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր, ինչպես նաև ապահովել հանձնաժողովի աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու Գործատուի պարտավորությունը:

1. *Գործող Տեսչական մարմնի լիազորությունները համապատասխանեցնել ՀՀ-ի կողմից վավերացրած ԱՄԿ կոնվենցիաների և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին՝ Տեսչական մարմնի գործառույթներում ընդգրկելով աշխատանքային օրվա տևողության, աշխատավարձի, հանգստի, երեխաների աշխատանքին առնչվող դրույթների պահպանման նկատմամբ վերահսկողությունը:*
2. *Ընդունել ըստ ռիսկայնության տնտեսական գործունեության բոլոր տեսակների ստուգման համար անհրաժեշտ ստուգաթերթերը:*
3. *Ստեղծել իրավական մեխանիզմներ՝ աշխատավայրում առաջացած դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների մասին գործատուների կողմից Տեսչական մարմնին տեղեկատվության պատշաճ տրամադրումն ապահովելու և չտրամադրելու դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառելու կապակցությամբ, մասնավորապես՝ «Աշխատանքային օրենսգրքի» 260-րդ հոդվածի 2-րդ մասը (Աշխատանքի վայրում աշխատողի մահվան դեպքում գործատուն պարտավոր է անհապաղ հայտնել ապահովագրողին, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և աշխատանքի անվտանգության ապահովման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին) փոփոխել և լրացնել՝ սահմանելով գործատուի կողմից դժբախտ դեպքի և մասնագիտական հիվանդության մասին Տեսչական մարմնին անհապաղ հայտնելու պարտավորություն, իսկ չհայտնելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու հնարավորություն, համապատասխանաբար՝ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում կատարել փոփոխություն՝ 42.1 հոդվածում (ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի պաշտոնատար անձանց հանձնարարականները չկատարելը կամ առողջապահական տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների, ուսումնասիրությունների և վարչական վարույթի իրականացմանը խոչընդոտելը) սահմանելով գործատուի նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը՝ նշված տեղեկատվությունը չհայտնելու համար:*
4. *Ապահովել Տեսչական մարմնի կադրային և նյութատեխնիկական հագեցվածությունը:*